EU4Business

Ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Հայաստան

2025

Ամփոփաթերթ բաղաքացիների համար

www.eu4business.am

EU4Business

Աջակցություն հայաստանյան փոքր և միջին ձեռնարկությունների աճին

Եվրոպական միության «EU4Business»՝ «ԵՄ-ն՝ բիզնեսի համար» նախաձեռնությունը հովանոցային նախաձեռնություն է և ներառում է Եվրամիության բոլոր գործողությունները, որոնք ուղղված են Արևելյան գործընկերության երկրների՝ Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի ՓՄՁ-ների աջակցությանը:

Հայաստանում պորտֆելը 2025 թվականին

34
ծրագիր
աջակցություն է տրամադրել ՓՄՁ-ներին

158.6
միլիոն եվրո
ՓՄՁ-ներին ԵՄ աջակցության ընդհանուր բյուջեն



Հայաստանում 2025 թվականին գրանցված արդյունքները

7,590 ՓՄՁ աջակցություն է ստացել

70.4% կին մենեջեր/սեփականատեր ունեցող ձեռնարկություններ են

24.6% աճել է աշխատողների թիվը ԵՄ աջակցություն ստացած ՓՄՁ-ներում

↑ **20.5%** աճ է գրանցվել ԵՄ աջակցություն ստացած ՓՄՁ-ների շրջանառությունում

163 ԵՄ աջակցություն ստացած ՓՄՁ-ները ներգրավվել են արտահանման մեջ

↑ **7.6%** արտահանման աճ ԵՄ աջակցություն ստացած ՓՄՁ-ներում

12,554 նոր աշխատատեղեր են ստեղծվել

€201.6 միլիոն եվրո լրացուցիչ եկամուտ ԵՄ աջակցություն ստացած ՓՄՁ-ների կողմից

2025թվականին Հայաստանում արդյունքներն ըստ ուղղությունների

Ֆինանսավորման հասանելիություն (ՖՀ)

- Կոնցեսիոն վարկեր ազգային բանկերի միջոցով
- Միկրոֆինանսավորում տնայնագործ բիզնեսների համար
- Փոքր վարկեր ՓՄՁ-ներին
- Ազգային բանկերի աշխատակիցների վերապատրաստում՝ ուղղված ՓՄՁ-ների սպասարկման բարելավմանը
- Ֆինանսական գրագիտության դասընթաց ՓՄՁ-ների համար

Բիզնեսի զարգացման ծառայություններ (ԲԶԾ)

- Անմիջական խորհրդատվություն և դասընթացներ ՓՄՁ-ների համար
- Գործարարության աջակցության ազգային կազմակերպությունների (ԳԱԿ) վերապատրաստում և կարողությունների զարգացում
- Բիզնես ինկուբատորների հիմնում՝ ստարտափերի համար
- Փոխադարձ աջակցության և զարգացման բիզնես կլաստերների զարգացում
- Աջակցություն կառավարությանը՝ նոր շուկաների հատկորոշման գործում
- Կարողությունների զարգացում արտահանման աջակցման կազմակերպություններում

Բիզնեսի համար նպաստավոր միջավայր (ԲՆՄ)

- Կարգավորման շրջանակի բարեփոխման և լավագույն փորձի հանրահռչակում
- Քաղաքականություն մշակողների և կարգավորողների կարողությունների հզորացում
- Հանրային և մասնավոր հատվածների երկխոսության խրախուսում
- Գործարար շրջանակների իրազեկում՝ բարեփոխումների գործընթացների և կանոնների/ընթացակարգերի մասին

6,320 ՓՄՁ ստացել է վարկ

74.1% տրամադրվել է կին մենեջեր/սեփականատեր ունեցող ՓՄՁ-ներին

€172.5 միլիոն նախաձեռնված վարկերի ընդհանուր արժեքը

€27,297 միջին վարկը

12 «ԵՄ-ն բիզնեսի համար»-ի հետ աշխատող գործընկեր ֆինանսական հաստատություն

832 խորհրդատվական ծառայություններ են մատուցվել ՓՄՁ-ներին

53.4% կին մենեջեր/սեփականատեր ունեցող ՓՄՁ-ներ

23 գործարարության աջակցության կազմակերպությունների կարողություններ հզորացվել են

55 ՓՄՁ մասնակցել է «Բիզնեսը բիզնեսի համար» միջոցառումների

10 կառավարական հաստատությունների կարողությունները հզորացվել են

15 հանրային և մասնավոր հատվածների երկխոսության միջոցառում երկրում

2 հանրային և մասնավոր հատվածների երկխոսության տարածաշրջանային միջոցառում

Հաջողության պատմություններ

Գյուղական այգուց մինչև միջազգային ցուցափեղկ. ինչպես է հայաստանյան Միս Դելիսն ավանդույթը վերածել արտահանման աճի

Այն, ինչ սկիզբ էր առել որպես ընտանեկան փոքրիկ նախաձեռնություն, վերաճեց ավանդական հայկական պահածոների արտադրության: Ավանդական բաղադրատոմսերով ընկերությունը ստեղծեց արտահանման արտադրանքներ: «ԵՄ-ն բիզնեսի համար» նախաձեռնության աջակցությամբ բարելավվեցին փաթեթավորումը, բրենդինգը և ստանդարտները՝ ապահովելով հասանելիություն միջազգային շուկաներին և արտահանման աճ:

Կարդացեք ամբողջ պատմությունը

Ընտանեկան նվիրումից դեպի աճող բիզնես. ինչպես է EU4Business-ն աջակցում հայկական գինեգործներին

Գինեգործական ավանդույթներով ներշնչված՝ Մանուկյան ընտանիքը 2016-ին բիզնես հիմնեց: Փոքր արտադրությունից հասան տարեկան 20,000 շիշ արտադրանքի: «ԵՄ-ն բիզնեսի համար» նախաձեռնության աջակցությամբ նրանք հասանելիություն ստացան ժամանակակից սարքավորումների, մշակեցին նոր կայք և մարքեթինգային ռազմավարություն, ապահովեցին աճ և զարգացում՝ փոխակերպելով բիզնեսը գինու զբոսաշրջային ուղղության:

Կարդացեք ամբողջ պատմությունը

Բուժիչ արմատներից դեպի գլոբալ շուկա. ինչպես է Դարմանը հայկական բուսաբուժությունը ներկայացնում աշխարհին

Բուսաբուժական ավանդույթների վրա հիմված նախաձեռնությունը վերածվեց բուսաթեյ և բնական արտադրանքի ընկերության: Ավանդական գիտելիքն ու ժամանակակից արտադրությունը համադրելով՝ ընդլայնվեց արտադրատեսականին: «ԵՄ-ն բիզնեսի համար» նախաձեռնության աջակցությամբ, որն ապահովեց դասընթացներ, հասանելիություն միջազգային բիզնես ցանցերին և խորհրդատվություն, բարելավվեցին որակը, կարողությունները և ապահովվեց մուտք միջազգային շուկաներ:

Կարդացեք ամբողջ պատմությունը

Մանրամասների համար տե՛ս՝ www.eu4business.am